31. ՄԵՌԵԼԻ ՀՈԳԻՆ

Մարդու մը մեկին իրեք տղա կէղնի։

Կելնի կասե.— Լաո, ես իմ ունեցած չունեցած պիտ բաժնեմ վրը ձըզիկ, էրթաք ձըզիկ ապրիք։

Կբերե ամեքուն հազար խըռոշ կիտա։ Մեկ կէրթա շափխանութենի ետեն, մեկ լե կառնե զուր հազար խըռոշ, կէրթա ուրեն ուրիշ դործըմ կբռնե, էն մեկել լե կառնե զուր հազար խըռոշ, կէրթա ուրիշ քաղաքըմ։ Կէրթա կտեսնա, օր հեռի լսողաց մոտեն, մարդու մը մեկ օզոր ըմ էձգեր է մեռելի մը ջանդակ, կքաշե ու կտփե։

Կասե՝ հալա էդ ինչ բան է։ Կէրթա կմոտենա էդ մարդուն։ Կասե.— Ջանըմ, էդ խեղճ մեռել ի՞նչ է էրի, օր դու էձդեր իս օզոր, կքաշիս ու կտփիս։

Մարդն կասե.— Քու ի՞նչ բան է։

Տղեն կասե.— Կհարցում։

Կասե.—Ընծիկ հազար խըռոշ կա էդ մարդու վրեն, կքաշեմ ու կտըփեմ իմ փարի տեխ։

Հազար խըռոշ կիտա էդ մարդուն, կվերցու զմեռել, պատնքե, տանե պահե ու յալա, դառնա հիդա ուր հոր քաղաք։

Կիգա, կիգա ուր հոր տուն։ Հեր կհարցու.— Տղա լաո, հ՝ու՞ր գացիր, հ՝ու՞ր էկար, ի՞նչ գործ տեսար։

Կասե.— Աբո, վալլահի, գացի ֆըլան քաղաք, հ՝ըռաստ էկա, տեսա օր մարդըմ օզորըմ էձգեր է մեռելի մը վիզ, կքաշե։ Հարցուցի, ասի՝ զէդ մեռել հ՝որի՞ն հըմալ կէնես, ասեց՝ ընծիկ հազար խըռոշ կա վրեն,

էնոքի հմալ կէնեմ։ Հանի հաղար խրոռշ տվի էդ մարդուն, առա զմեռել ձեռքէն, պատնքեցի, տարա թաղեցի, թորկի էկա։

Հերն կհանե հարիր օսկի լե կիտա։ Կասե.— Առ քզիկ հարիր օսկի, դնա քզիկ գործ տես։

Տղեն կառնե հարիր, էրկու հարիր օսկի, կէրթա բազրկանըմ լե դտնա։ Կբառնա զուր բեռներն ու բար կիտա դեմ էն քաղաք, օր զմեռելն էր աղատի։

Կէրթա, քաղքի մոտ գեղըմ զուր բեռներ կթալե, կասե՝ «Կանի էրթամ էդա մոտ գեղ, ընծիկ աչքաբաց մշակըմ գտնամ բերիմ, օր հասկնա բազրից, առնեմ հ՝իգամ, լուսուն տանիմ զիմ ապրանք, քաղքի մեջ ծախիմ»։

Վերուց զուր փեթ, գնաց գեղ։ Տեսավ օր բաբաիկիթ ջրհելըմ, զընդ ու պընդ ձեռքեր քշտեր է, հուչրկներ թալեր է վիգնըվեր ու էնդիեն կիգա։

Էկավ մոտեցավ ուրեն, ասեց.— Կտրիճ, հ՝ուստե՞ն կիգաս, հ՝ու՞ր կէրթաս։

Տղենն ասեց.— Էդա քաղաք կէրթամ։

Մարդն ասեց.— Կյալո, էրթամ քաղաք, մշակըմ կրոնա՞մ գտնամ բերիմ ընծիկ։

Տղենն ասեց.— Ես կէղնիմ։

Մարդն ասեց.— Օր դու կէղնիս, զքու հախն էնէ։

Տղենն ասեց.— Ընծիկ հախ չկա, իմ հախն էն է, օր հար ինչ առնիս, ծախիս, վաստակի կես ընծիկ, կես քզիկ։

Մարդն ասեց.— Շատ աղեկ կասիս։

Ընդունեց, բրոնեց զձեռքն էկավ բազրկնի մոտ։

Էկան բազրկնի մոտ, զուրանց բեռներ բռնին, բար տվին, գացին քաղաք, տուքան բռնին, զուրանց մալեր տեղագրեցին. պառկան քնան, առավոտ հ՝ելան ու սկսեցին ուրանց առուտուր էնել։

Աֆանդրմ, ամբողջ քաղաք դառցավ վրը էդ մարդուն, գալացողն էկավ ու առուտուր էնեց։

Էդ քաղքի մեջ հարուստ երևելի մարդ մը կեր։ Էդոր լե ախչիկըմ կեր, ինչ խտար մեկըմ օր էկեր է զէդ ախչիկ հ՝ուզեր է, տարի ուր տուն, լուսուն հ՝ելած ին տեսած, օր տղեն մեռեր է, աման ախչիկ շատ խորոտիկ կէղնի։

Աֆանդրմ, էդ հարուստն էր, հասկցավ օր էդ մարդ քաղքի մեջ հ՝ըմնուց շատ աղեկ առուտուր կէնե, լուսուն մարդ ճամբեց, զէդ մարդ կանչեց։ Կանչեց, ըսավ, թե.— Ես լսեր իմ, օր դու շատ աղեկ, աչքըբաց մարդ իս, քու առուտուրի, քու գործու մեջ, ես կուզիմ, օր զիմ ախչիկ իտամ քզիկ։

Տղեն ասեց.—Աղեկ կասիս, ընծիկ վադա տուր, ախբերըմ ունեմ, էրթամ հարցում հ'ուրնե, օր էն լե կամք տվեց, կիգամ կուզիմ։

Հ'ելավ, հ'ելավ էկավ մշկու մոտ։ Պատմեց մշկուն թե.— Էդա քաղքի մեջ հարուստ երևելի մարդըմ կա, ճամբեր է, կանչի զիս, կասե՝ «էկո զիմ ախչիկ իտամ քզիկ», ի՞նչ կասիս։

— Ես ինչ կասիմ, գնա ուրեն ասե, թե օր էրկուսիս կիտա, առ, թե չէ՝ մ' առնի։

Մարդն դարձավ գնաց երևելի մարդու մոտ։

Հարցուց ասեց.— Իմա՞լ էղավ, քու ախբորնե հարցուցի՞ր։

Տղեն ասեց.—Հա, հարցուցի, կասե օր կիտա էրկուսիս, կառնենք, թը չէ, չընք առնի։

Հարուստն է, մտածեց, ասեց. «Թե օր խեղդե, զէրկուս հիտրաց լե կառնա խեղդե, թե չէ, զմեկ լե չկըռնա խեղդե». ասեց՝ կիտամ։

Հարսնեկ բըռնին, առան զախչիկ ու գացին ուրանց տուն։

Աֆանդըմ, հ'իրկուն օր էղավ, տեխ փռեցին, մշակն ասեց.—Աղա, դուք պառկեք։

Ախչիկն ու աղեն պառկան, ինք բերեց մոմրմ կպցուց, տնկեց զարկեց զլխու վերև ուրանց, մեկ լե՝ օտներու տակ ու նստավ իշքեց։

Մարդիկ քնան սահաթվա մը չափ։

Մշակն իշքեց օր ախչկա բերնեն ըսպիտակ օձըմ հ'ելավ, զպոչ էդ էր կփաթեր տղի վզին, հասավ վրեն բըռնեց բոկեն քամեց, խեղդեց, թալեց սպիտակ տոպրկի մեջ ու տարավ պատեն կախեց, էկավ նստավ։

Սահաթըմ նստավ, տեսավ օր կարմըր օձըմ լե հ'ելավ, էդ օր զտղեն կխեղդեր, հասավ վրեն, զէրկու մատ դրեց-բոկին, թըմըցուց, բերեց թալեց սպիտակ օձու խեչ, սպիտակ տոպրկի մեջ։

Սահաթըմ վերշ սև օձ հ'ելավ, զեն լե խեղդեց, բերեց թալեց տոպրկի մեջ, սպիտակ ու կարմիր օձերու խեչ։ Էղավ իրեք, ճետ կանչեց։

Ախչկա հեր լե սահաթուն հեզըմ մարդ կճամբե.— Կյալո, գացեք տեսեք տղեն խեղդեր է, թը՝ չէ։

Լուսուն էղավ, հ'ելան լվացվան, իրեք հիտրաց, ախչիկն, աղեն ու մշակն նստեր են կմժլեն։

Ախչկա հեր, չէ՞ սըպր չկա, մարդ ճամբեց, ասեց.—Գացեք, տեսեք իմա՞լ էղավ, իմ ախչիկ հ'ելեր է քնուց, չէլեր է։

Էկան էրդրկի վրեն, իշքեցին օր՝ իրեք լե հ'ելած են քնուց, նստած վըր տեխին, կմժլեն։

Գնաց էդ մարդ երևելի մարդուն ասեց.— Զասի՞ս օր իրեք լե հ'ելած ին, նստած վըր տեխին, անուշ-անուշ հ'իրարու հետ կժըղլին։

Զէդ օր ասին, երևելի մարդ քըրպեն հ'իրարուց ցրխաց, էղավ հազար կտոր։

Էկան ախչկան լուր բերին՝ չասի՞ս քու պապ մեռեր է։

Ախչիկն ասեց.—Մեռե՞ր է, սուգըմ կապիմ, մեռեր է մեռի։

Էդ մարդուն ուրիշ զավակ չկեր, էդ ախչիկ միակ էր։

Շատերուն օր զուր ախչիկ տվեր էր ու օձեր խեղդեր են, բերեր զէնդոնց հարստութեն ու լըցեր էր վիրարու։

Լուսուն հ՝ելան, տղեն զուր բեռներ բառցավ, ծանդր բազբկանըմ կապեց, ախչիկ լե գնաց զուր հոր ունեցած-չունեցած կապեց, բառցան ու հ՝ընկան ճամբախ, էկան։

Էկան էնտեխ օր աղեն զմըշակն էր բռնի, զուրանց բազրկնի բեռներ թափին։

Աղեն օձերու մասալից խապար չուներ։

Էդ տեխ մշակն ասեց.— Աղա, ես էլ էդա տեխեն չըմ հ՝իգա, էկո զմըր բաներ կիսենք, աստված զքու բան հաջողե։

Բերին ինչ օր առած-ծախած են հաշվեցին, սարմիեն հանեցին մեջեն, ինչ օր քար էրած են կիսեցին վիրարու, մնաց կնիկ։

Մշակն ասեց.— Ապա, մնաց կնիկ, կիսենք, կես ընծիկ, կես քզիկ։

Աղեն ասեց.— Տնաշեն, իմա՞լ կնիկ կկիսվի, կամ ընծիկ, կամ քզիկ։

Մշակն ասեց.— Չէ, մենք հըմալ ինք խոսացի, էնենք էրկու շըղա, շըղե մը ընծիկ, շըղե մը քզիկ։

— Դու, քու աստված, կիսենք, կիսենք։

Մշակն առավ զկնիկ, բերեց կանկըցուց օրթեն։ Կնկան ասեց.— Մենք էրկուս ինք առի զքզիկ, թրով կիսենք, էնինք էրկու շղա, խայիմ բըռնե զքզիկ, թրով կզարկիմ, էնիմ էրկու շղա, շըղե մը ընծիկ, մեկ լե իմ աղին։

Չկնիկ կանկըցուց, շոռփեց զթուր ու գնաց մըզիլ քաշեց էկավ, փրփուր տվեց բերնեն ու էկավ զթուր օր հ՝իջուցներ, բռնեց զձեռք, ասեց՝ զէդա տվի աստծու խաթըր։

Մեկ լե շոռփեց զթուր, գնաց, խաղցավ, խաղցավ, էնդիեն գիլխեզդուկի պես էկավ, բերեց զթուր օր զարկեր, զձեռք բռնեց, ասեց՝ զէդա լե տվի իմ աղի խաթըր։

Ասեց.— Էդ անգամին զքզիկ մուխքյամ բռնե, կէրթամ կիգամ օր զարկեմ, էլ մարդու խաթըր չըմ իտա, կէնեմ էրկու շղա, շղե մը ընծիկ, մեկն իմ աղին։

Գնաց, օր էկավ զթուր կիջուցներ, կնիկ ծորթքաց, օր ծորթքաց զախեն դունդրմ ժրժմունկ կնկա բերնեն պատավ գետին։ Օր պատավ գետին, գնաց, սպիտակ տոպրակ կախուկ էր ջորու բեռան ետև, իրեք օձ լե մեջն են, առավ, էկավ։

Ասեց.— Աղա, կտեսնաս զէդա իրեք օձ, էն հ՝առջին գիջեր օր զքզիկ կարգինք՝ պառկար, դու ու ախչիկ քնաք, ես էրկու մոմ վառի.

մեկ ձրը գլխու վերև, մեկ լե ձրը օտներու տակ, նստա ու իշքի։ Նստա ու իշքի, տեսա օր ըսպիտակ օձըմ հ՝ելավ կնկա բերնեն, էտ էր, կփաթ-վեր քու վզի վրեն, բռնի խեղդըրկեցի, թալի տոպրկի մեջ։ Սահաթըմ մանցի, կարմիր օձըմ հ՝ելավ, զէն լե հըմալ արի, սահաթըմ լե մանցի, սև օձըմ հ՝ելավ, ինչ գլուխ ցավանք էնինք, ղիրեք լե բիթրմիշ էրի, աման էդա ժըժմունկ մացեր էր կնկա փոր, իրեք-չորս տարի վերջ կմեծնեն, կելնեն զքղիկ մեկ լե կխեղդեն, հմալ էրի օր, էդ ժըժմունկ հ՝իգեր կնկա բերնեն հ՝ընկներ։ Հմկա հ՝իստկավ, առ գնա, քզիկ հալալ էղնի։ Կնիկ լե քզիկ թըղ էղնի, հարստութեն լե, ընծիկ հարամ է էղի։ Ես էն մեռելի հոգին իմ, օր հազար խըռոշ տվիր, առար էն մարդու ձեռքեն, պատըն-քեցիր, տարար թաղեցիր, ինչ օգուտ օր դրա քու աղեկութենի տըկեն իմ սրտով չկըռցա հ՝ելնենք։

Ասեց ու աներևույթ էղավ։

Մարդն էդ տեխեն բառցավ զուր բեռներ, էկավ հասավ ուր քաղաք, ջուհաբ գնաց հոր, հ՝ելավ գնաց, բերեց հ՝իջուց։

Բռնեց հարսնեկ, յոթն օր զարկին ու խաղցան, էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՝իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։